## ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ։

Պատմական տեղեկութիւններէն կ՚իմանամք, որ մեր Ազգին մէջ նախնական կանոն եղած էր, որ կուսակրօն հոգևորականները, որ վանքին մէջ միաբան լինէին, իրենց վախճանէն ետքը բոլոր ստացուածքնին իբրև ժառանգութիւն նոյն վանքին կ՚մնար, և ոչ ոք իրաւունք չունէր վախճանելոյ մերձաւոր և հեռաւոր ազգականներէն ժառանգութեան ձեռնամուխ լինելու. և ահա այս պատճառաւ էր, որ ՚ի հնումն մեր վանքերուն մէջ կ՚գտնուէր մեծամեծ հարուստ կալուածքներ, բարեկարգեալ դպրոցներ, հիւանդանոցներ բազմահարուստ գանձարաններ և այլն և այլն. Սակայն այս նախնական բարեկարգութիւնները երբ որ զանազան պատճառներով խանգարուեցան և նոցա փոխարէն տեղի ունեցան ազգի ազգի զեղծմունքներ և կալուածոց ու ստացուածոց ժառանգութ[եան] մեկէն միւսին փոխանցումներ, այն հոյակապ վանքերը և մեն ստանները սկսան այն աստիճան վերջին նուաստութեան և աղքատութեան հասնել, մինչև իրենց քանդուածոց նորոգութիւն ընելու ձեռնհաս չլինելէն ետքը, իրենց ամէն նպատակներէն զուրկ և միաբան մի անգամ ևս պահելու անկարող եղան.

Գոհութիւն Աստուծոյ, որ եկաւ հասաւ Հայաստանի աւերակաց այցելութեան դարը. Վեհափառ Արբազնագոյն Հայրապետն մեր Տ. Տ. Գէորգ. Դ. ընդհանրական Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ հայրապետական աթոռոյս մէջ իբրև հոգևոր գլուխ եկեղեցական և նախնի բարեկարգութեան վերստին մըտըջենաւորելու եռանդեամբ ըստ օրինի նախնի սուրբ Հայրապետաց ազգիս, նախ առաջին ինքն ամենուն օրինակ լինելու համար՝ իր գոյքը թողուց սուրբ Էջմիածնայ ժառանգութիւն և ՚ի նոյն յորդորեց և զմիաբանութիւնս. որոնք ըստ ցանկութեան սրտից իւրեանց հետևեալ գրաւոր պայման և ուխտը հաստատեցին ստորագրութեամբ և մատուցին Վեհափառ Հայրապետին, որպէս զի այսուհետև բոլոր կուսակրօն հոգևորականաց Էջմիածնի գոյքը յետ վախճանի լիցին ՚ի ժառանգութիւն Աթոռոյս.

Պայման և ուխտ միաբանութեան Արարատեան Մայր Աթոռոյն Էջմիածնի ՚ի ներկայութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Գէորգայ չորրորդի

Ամենայն անձն որ նուիրէ զինքն ՚ի վանականութիւն՝ պարտաւոր է ըստ հրամանի փրկչին Յիսուսի թողուլ զաշխարհ և զամենայն ինչս իւր և անձնուրացութեամբ հետևիլ նմա կատարելով միանգամայն զ[illegible] ուխտ սրբազան երդմանն զոր երդնու առաջի Աստուծոյ ՚ի ժամ ձեռնադրութեան. և քանզի ամենայն կուսակրօն հոգևորականք սկսեալ յեպիսկոպոսաց մինչև ցսարկաւագն դնեն յանձնութեան

ոչ գոլով տեարք գոյից իւրեանց չունին իրաւունս բաժանելոյ զայնս ըստ հաճոյից բարեկամաց իւրեանց և ազգականաց. և նոքին իսկ ազգականք ոչ ունին իրաւունս իբրև ժառանգ ներկայանալ և պահանջել զգոյս հանգուցելոյն, այլ յետ մահուան կուսակրօնից գոյք իւրեանց արժան է մնալ 'ի սեպհականութիւն Էջմիածնի գանձարանին, և այլոց վանօրէից միաբանիցն՝ վանուց իւրեանց. իսկ վանահայրք որք ըստ անօրէնութեան հոգևոր ծայրագոյն իշխանութեանն կարգին 'ի պաշտօնն նոյնպէս գոյք նոցա պատկանին Սրբոյ Էջմիածնի. և ոչ ոք յազգականաց հեռաւորաց կամ մերձաւորաց նոցա ունին իրաւունս յարուցանելոյ առ այն զվէճ. իսկ եթէ իցեն Աստուածահաճոյ կտակ հանգուցելոյն յօգուտ սրբոյ Աթոռոյն, վանօրէից կամ վանական դպրոցաց՝ մնասցեն նոքա անփոփոխ նոյնութեամբ. քաջ գիտելով զայս մեք ի ներքոյ ստորագրելոցս, ըստ ամենայնի համաձայն գտանիմք և ոչ երբէք տամք 'ի մերս կողմանէ իրաւունս ազգականաց մերոց մերձաւորաց և հեռաւորաց յետ վախճանի մերոյ իբրև ժառանգորդ մեր հանդիսանալ և պահանջել զմնացեալ գոյս մեր կամ մասն ինչ ի գուլից մերոց. մեք ի սուրբ խղճէ շարժեալ խոստովանիմք զի յետ վախճանի մերոյ ուր երբ և յոր պաշտօնի գտանիցիմք ժառանգ և ժառանգորդ մեր է գանձարանն սրբոյ Էջմիածնի. և ոչ այլ ոք ի մերձաւորաց մերոց և յազգականաց և եթէ նոքա կամիցին իբրև ժառանգ ներկայանալ ընդդէմ մերոց կամաց և խղճի, չունիցին բնաւ իրաւունս ոչ 'ի հոգևորական և 'ի քաղաքական դատարանս և ոչ յայլուր դանգատիլ և բողոքել. և եթէ յանդգնեսցին մի ոք ուրեք նոցա ամենեքին, զի մեք ըստ մեր խղճի մնաց յօժարակամ ստորագրեմք աստանօր.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿ

Դատաւորն Իրաւարար
Ի մին մասնեաց զգողն արդար
զոր զաղայալ զգողոնքն եառ
փրկանք անձին իւրոյ արար.

Էր յարեւելք աղուոր քաղաք մի
է բարեսու ու մրգալի.
Բուրաստան մեծ աղւոր այգի
գերիս յիւր մէջն պիտի .Ա.

Ներսէս շնորհալի մեր սուրբ Հայրապետի անունով այսպիսի հանելուկներ ձեռագրաց մէջ շատ տեղ կգտնուին չորս հարիւրէն աւելի. ցանկալով մեր ազգային ծանօթութիւն տալ Եվրոպիոյ կողմանց հայոց այն ժամանակն եղած աշխարհաբառ լեզուի վրայ, որով գրուած են այս հանելուկները, Ամսաթերթիս մէջ կտպենք հետ զհետէ, ի զրօսանս բաժանորդաց, որոնք սուրբ գրոց նմանից վրայ շինուած են։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

[illegible]

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ